

1749



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 18 » 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 032 - 25

Նախաձեռնող՝

«Լուր» ՍՊԸ

ք. Երևան, Նոր Նորք Միկոյան փ. 13 շ., բն. 42

Գործունեությունը՝

Ալավերդի համայնքի Աքրրի բնակավայրում
դպրոցի կառուցում

Լոռու մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 032 - 25

« 18 » փետրվարի 2025թ.

Լոռու մարզի Ալավերդի համայնքի Աքրի բնակավայրում դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Լուր» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, Աքրի բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Լոռու մարզի Ալավերդի համայնքի Աքրի բնակավայրում: Հողամասի մակերեսը կազմում է 3,658 հա՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (կադաստրային ծածկագիր՝ 06-022-0023-0013): Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի իրավունքի գրանցման N 12062019-06-0007 վկայականը:

Դպրոցի նոր մասնաշենքերը նախատեսվում է կառուցել ներկայիս դպրոցի տարածքում: Դպրոցի գործող 7 մասնաշենքերից 6-ը ապամոնտաժվելու են սկզբում, իսկ 1-ը՝ նոր դպրոցի կառուցումից հետո՝ համաձայն տեխնիկական առաջադրանքի:

Նոր կառուցվող դպրոցի կառուցապատման ընդհանուր մակերեսը կկազմի 3548.0 մ²: Այն նախատեսված է 432 աշակերտների համար և բաղկացած է 2 մասնաշենքերից:

Ըստ նախագծի նախատեսվում է կառուցել երկհարկանի դպրոց: Բացի երկու հարկերը, դպրոցը կունենա նաև նկուղային հարկ՝ 3.3 մ բարձրությամբ և 620 մ² մակերեսով, որը ծառայելու է նաև որպես ժամանակավոր թաքստոց: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ՝ ապակե ծածկի տակ, լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար:

Առաջին հարկում նախատեսված են I-V դասարանների համար 2-ական դասասենյակներ՝ նախադպրոցական դասասենյակ, համակարգչային տեխնիկայի դասասենյակ, մեթոդ միավորման, տեխնալոգիայի, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական



պարապմունքների դասասենյակներ, ուսուցչանոց, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն իրենց ընդունարանով, բժշկի սենյակը, գրադարանը, սպորտդահլիճը՝ իրեն կից հանդերձարաններով, ճաշարանն ու խոհանոցը, ինչպես նաև 3 սանհանգույց և այլ օժանդակ սենյակներ ու տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Երկրորդ հարկում նախատեսված են VI-XII դասարանների դասասենյակները՝ հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների, մեթոդ միավորման դասասենյակները, կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի մասնագիտացված դասացենյակներն իրենց կից լաբորատորիաններով, ուսուցչանոցը, հանդիսությունների դահլիճը, 4 սանհանգույցներն ու այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Նոր դպրոցը նախատեսվում է կառուցել միաձույլ երկաթբետոն կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ հիմքերը, սյուները, հեծաններն ու միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ: Միջնորմերը նախատեսված են 200x400x200 թեթև բետոնի բլոկներից՝ համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3.5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակները կունենան 7մx7մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կկազմի 48 մ²:

Առաջին հարկի բարձրությունը նախատեսված է 3.3 մ: Երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմելու է 3.0 մ: Սպորտդահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կլինի 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ 4.5 մ:

Դպրոցի բակային տարածքում նախատեսված է բաց մարզադաշտ, մարզահրապարակ և վազքուղի: Դպրոցի միջանցքներում և սրահներում նախատեսվում են կերամոզրանիտե հատակներ, դասասենյակներում և դահլիճներում՝ վինիլային հատակներ: Դպրոցին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն՝ 6մ x 9 մ առանցքային չափերով:

Դպրոցի շենքի տանիքին նախատեսվում է տեղադրել 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Դպրոցի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով:

Դպրոցի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ջրագծից: Նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու ջրահեռացման ցանց և հակահրդեհային սնուցող ցանց:

Նախատեսված է տեղադրել խմելու ջրի պոմպային կայանք: Պոմպային կայանքը բաղկացած կլինի 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատելու են ջրամատակարարման կարիքների համար, մյուս 2-ը միանալու են հրդեհի դեպքում:

Տաք ջրամատակարարման համակարգը սնվելու է կաթսայատնից: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվելու են 10 մմ հաստությամբ ռետինե խողովակատորներով:

Կենցաղային կոյուղու համակարգը մոնտաժվելու է կոյուղու PVC Ø50 և Ø110 մմ խողովակներով: Կեղտաջրերը ինքնահոս հեռանալու են բակային ցանց, որը միանալու է տարածքում տեղադրված կոյուղու մաքրման կայանին: Անձրևաջրերը կհավաքվեն ռոտոման համար նախատեսված 2 ջրի



ռեգերվուարներում՝ 46 մ³ ընդհանուր ծավալով և կօգտագործվեն դպրոցի կանչապատ գոտիների ոռոգման համար:

Դպրոցի գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գազատարից, որն ապահովում է ներկայումս գործող դպրոցի կարիքները:

Համաձայն նախագծի կառուցապատումից ազատ մնացած տարածքները բարեկարգվելու և կանաչապատվելու են: Բարեկարգման և կանաչապատման աշխատանքները կմեկնարկեն գոյություն ունեցող դպրոցի հին շենքի ապամոնտաժումից հետո:

Շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման համար ջրի հիմնական աղբյուր կծառայի համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով: Ապամոնտաժման ընթացքում գոյացած շինարարության փայտանյութի թափոնները գնահատվում են երկրորդայի օգտագործման համար պիտանի և կօգտագործվեն կապալառուի կողմից՝ որպես երկրորդային հումք այլ շինարարական աշխատանքներում: Այլ նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ, փայտանյութ, դռներ, պատուհաններ, խողովակներ) կտեսակավորվեն և նույնպես կօգտագործվեն որպես երկրորդային հումք:

Ապամոնտաժման գործողություններից գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 5000 տ, շինարարական աղբը՝ շուրջ 120 մ³, իսկ փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը՝ 3130մ³:

Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ ապամոնտաժվելու են դպրոցի գործող 7 մասնաշենքերից 6-ը: Պահպանված մասնաշենքում իրականացվելու է դպրոցի ուսումնական գործընթացը և այն ապամոնտաժվելու է դպրոցի նոր շենքի կառուցումից հետո:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նոր դպրոցի կառուցման ընթացքում հողի հանույթը կազմելու է 7530 մ³, որից ետլիցքը կազմելու է 4400 մ³: Մնացած 3130 մ³ հողը տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է,
- շինություններն ծածկվելու են համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- փոշենստեցման նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում,



- շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում նախատեսվում է ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- բոլոր մեքենաները ապահովված կլինեն համապատասխան խլացուցիչներով:
- կենցաղային աղբի տեղափոխումը իրականացվելու է աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական աղբը տեղափոխվելու է հատուկ հատկացված վայր, համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Մթնոլորտային օդի, փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանի, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի աղտոտվածության, աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 1.5 մլն. ՀՀ դրամ

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Լոռու մարզի, Ալավերդի համայնքի Աքրի բնակավայրում դպրոցի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լուծակ Լոռու մարզի, Ալավերդի համայնքի Աքրի բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն ինչպես նաև Լոռու մարզպետարանը և Ալավերդի համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:



2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ալավերդի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
6. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
7. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով: Ապամոնտաժվող թափոնների տեղադրումը իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ալավերդու համայնքապետարանի հետ համաձայնեցված:
8. Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է բացառել շինարարական տեխնիկայի և շինանյութի մուտքը դպրոցի հարակից տարածքում գտնվող հանրապետական նշանակության պատմության և մշակույթի հուշարձանի՝ 10-13 թդ դարի գերեզմանոցի տարածք: ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Լուք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի, Ալավերդի համայնքի Աքրոի բնակավայրում դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Կերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝



Գոհար Մինասյան